291.63
Ղ615ա

ՍՐԲԱԶԱՆ

ՏԵՐՈՆ ՄԵՐՈՑ

ՊԻՈՍԻ Թ.

ԷՆԱՄՕՔ ԸՍՏՄԻԾՈՑ ՔԱՀԱՆԱՅԵՊԵՏԻ

ԲՈՒԼՈՒ ԱՅԻ ԱՐՔԻԵՊԻՍԿՈՊԱՅ



ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԱՆԹԻԼԻԱՍ
ՀԻՄԱՆԱՆ
1931
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԿԻԼԻԿԻՈՅ

1848.

291.63
Ղ615ա

ՍԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԱՆԹԻԼԻԱՍ
ԼԻԲԱՆԱՆ
1931
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՀԱՅՈՑ ԿԻԼԻԿԻԱՅԻ

ՊԻՈՍ ՊԱՊ Թ.

ԵՎ ՀԱՐԵՒԵԼԵՑՍ։

ԶՍՏ Մուսուածային տնտեսութեան առանց ինչ մերոյ՝ արժանեաց՝ ի գերագոյն Ամենայն Ռաքելոյն Պետրոսի ամբարձեալ, և զամենայն Եկեղեցեաց զհոգ յանձն առեալ, անդստին՝ ի սկզբանէ Քահանայապետութեան մերոյ զոչս մեր դարձուցաք առ զանազան Քրիստոսադաւան ազգս Արեւելից և սահմանակից գաւառացն յոր և իցէ սարաղութենէ։ առ որս ստիպեալք տարածել զառանձին խնամս մեր ըստ բաղում գլխոց։ Քանզի յարեւելս Սնածին Որդին Աստուծոյ վասն մեր մարդկան մարդ եղեալ երեւեցաւ յաշխարհի։ և՝ ի՛ձեռըն կենաց, մահուան, և յարութեան իւրոյ մեզ կեանս պարգեւել հաճեցաւ։ Յարեւելս նոյն ինքն Կենարար մեր, և ապա աշակերտք նորա՝ ի սկզբան անդ զԱւետարանն լուսոյ և խաղաղութեան քարոզեցին. և անդէն բազում մեծահռչակ եկեղեցիք հիմնեալք Առաքելոցն անտի պայծառ փայլեցան։ Նսեւ զինի ժամանակաց և ընդ դարս սրբութեամբ և վարդապետութեամբ ծաղկեցան յաղագս արեւելից Եպիսկոպոսունք, Վկայք և այլ ևս սրբ հոգեսկսպք յորս ընդ ամենայն աշխարհ մեծանուն հանդիսացան Իգնատիոս Անտիոքացի, Փոլիկարպոս Զմիռնացի, Գրիգոր Նէոկեսարացի, Գրիգոր Նիւսացի, Գրիգոր Նազիանզացի, Աթանաս Աղեքսանդրացի, Բարսեղ Կեսարացի, Յովհաննէս Ոսկեբերան, Կիւրեղ Երուսաղեմացի, Կիւրեղ Աղեքսանդրացի, Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց, Եփրեմ Ասորի, Յովհաննէս Դամասկացի, և Առաքելք Սուրբ Կիւրեղ և Մեթոդիոս Թող և զայլ անթիւ սրբ որք և հեզմամբ արեան իւրեանց վասն Քրիստոսի, կամ խնա-

տուն մատենագրութեամբ, և ճշգիարհիկ առաքինութեամբք առ ամենեսին արժանի անմահ յիշատակաց համարեցան։ Ի փառս ա-ռեւելեայց առաւելուն նաեւ բազում ժողովք Եպիսկոպոսաց, մե-նաւանդ առաջին Տիեզերական Սինհոդոսք գումարեալք յարեւ-ելս, յորս Կաթուղիկէ հաւատք առաջնորդութեամբ Քահանայա-պետաց Հռովմայ՝ ընդդէմ հնարիչ արանց որք նորաձեւս ինչ առ-այնու ժամանակօք մուծանել ջանային, պաշտպանեցան և յայտ-դիման վճռօք հաստատեցան։ Եւ ի վերջին ժամանակս իսկ, թէ-պէտ և ոչ փոքր ինչ մասն արեւելեան Քրիստոնէից ի բաց եկաց ի հաղորդութենէ սրբոյ Աթոռոյս, որով և ի միութենէ Կաթու-ղիկէ եկեղեցւոյ. և ազգք անծանօթք Քրիստոնէական կրօնից տի-րեցին յարեւելս։ Սակայն գոսան անդ ոչ սակաւք ապաւինեալք ի զօրութիւն Աստուածային Հոգւոյ՝ յայտ յանդիման ցուցին զհաս-տատութիւն իւրեանց ի ճշմարտութեան հաւատոյ, և ի միութեան Կաթուղիկէ եկեղեցւոյ ի մէջ բազմադիմի նեղութեանց և երկարատեւ տառապանաց այնց ժամանակաց։ Եւ առանձին գովեստ-թեամբ չկարեմք ասել զանց առնել զնոցին Հայրապետաց, զԱս-խադահ Եպիսկոպոսապետաց. զԱրհիեպիսկոպոսաց, և զԵպ-իսկոպոսաց, որք բազում ջանիւք խնամ տարեալ պահեցին զոգիս իւրեանց ի խոստովանութեան կաթուղիկէ ճշմարտութեան. և ազ-գին խնամովք օգնականութեամբ բարձրելոյն ի մեղմանալ դատ-նութեան ժամանակացն գտաւ ի նոսա ոչ սակաւ բազմութիւն հա-ւատացելոց՝ որք ի Կաթուղիկէ միութեան հաստատուն մնային։

Արդ առ ձեզ յառաջ քան զամենայն դարձուցանեմք զբանս մեր, Յարգոյ Եղբարք, սիրելի որդեակք, Կաթուղիկէ եկեղեցւոյ Առաջնորդք, ուխտի մանկունք այլ և այլ կարգաց և աշխարհա-կանք՝ որք խոցառ հաստատուն կացեալք ի հաւատս և ի հաղոր-դակցութեան այսր սրբոյ Աթոռոյս, և կամ յետոյ ծանուցեալ ըզ-սխալանս, գովելի առաքինութեամբ ի նոյն եկեալ միացայք։ Եւ թէպէտ յառաջագոյն իսկ գրեցաք զգիր պատասխանւոյ առ բազու-մս ի ձէնջ՝ յորոց ընկալաք զթուղթս ուրախակցութեան ընդ հասա-նել մեր ի գերագոյն Աթոռ Քահանայապետութեան. և միանգա-մայն յիններորդում աւուր Նոյեմբերի յամի 1846 առաքեցաք ըզ-թուղթ մեր Տիեզերական առ ամենայն առաջնորդս Կաթուղիկէ ե-կեղեցւոյ ընդ ամենայն աշխարհ։ Բայց և այժմ ի դէպ համարիմ,

տալին առանձին թղթով զկանոնական սէր և զնեռամ մեր՝ զոր ունիմք ի սրտի վասն ձեր, և վասն ձերոց պիտոյից, հաւատեաւ ծանուցանել ձեզ։ Եւ առ այս առիթ բարեդէպ եղեւ մեզ ճանապարհորդութիւն Պատուական Եղբօր Մերոյ Իննովկենտիոսի Եպիսկոպոսին Միդենոյ՝ զոր հրեշտակութեամբ առաքեցաք ի Կոստանդնուպոլիս առ Արձրագոյն Դուռն Օսմանեանց՝ յանուն մեր ելանել առաջի հզոր Ինքնակալի Տաճկաց, և շնորհս մատուցանել նմա ի դիմաց մերոց վասն առաքելոյ նորա յառաջագոյն զՊատգամաւոր իւր յողջոյն մեր։ Եւ առանձինն պատուիրեցաք նոյն պատուական Եղբօր զձեզ և զամենայն գործս ձեր և Կաթուղիկէ եկեղեցւոյ ի մեծատարած տէրութեան անդ Օսմանեանց, նոյն Ինքնակալին մեծաւ խնամով յանձն առնել։ Եւ հաստատեալ եմք ի մտի եթէ նոյն իսկ Ինքնակալն՝ որ ըստ ընդարձակ մարդասիրութեան իւրոյ խնամէ զձեզ, մեծ և ս քաղցրութեամբ և սիրով ձերոց իրաց պարշապան կայցէ։ և ոչ թողուցու ումեք ի պատճառս Կաթուղիկէ հաւատոց նեղել զմի ոք ի հպատակաց իւրոց։

Նոյն ինքն Եպիսկոպոսն Միդենոյ զմերոյ սիրոյն խնամս ի վերայ ձեր բաղում և երկոցն բանիւք յայտնի արասցէ հոգեւոր առաջնորդաց և իշխանաց ազգաց ձերոց՝ որ են ի Կոստանդնուպոլիս։ և ապա ի դառնալ նորին առ մեզ ըստ պատշաճի իրացն և ի դէպ ժամանակի դնասցէ և յայլ աշխարհս Արեւելից և ըստ պատուիրելոյ մեր այց արասցէ Ուղղափառ եկեղեցեաց ընդ այլ և այլ արարողութեամբ որք գտանին ի կողմանս այնոսիկ, և զամենայն Յարգոյ Եղբարս և զսիրելի որդեակս յանուն մեր ողջունեալ՝ բաղում սիրով խօսեսցի ընդ նոսա ի մխիթարել զնոսա։

Նա ինքն յանձնեսցէ ի ձեռս սոցա և այլոց ևս ի ձէնջ զայս թուղթ մեր, առ ի յայտ առնել ըստ յառաջագոյն ծանուցանելոյ մեր, զսէր և զդութ մեր ի վերայ Ուղղափառ Ազգացդ, և ձեզ ամենեցուն հաւատեաւ ծանուցանել եթէ չէք մեզ առաւել ցանկալի քան զայն միայն յառաջ տանել յաւէտ զբարի ձեր և Ուղղափառ կրօնի առ ձեզ։ Սակայն իբրեւ լուս եղեւ մեզ հանդերձ այլովք և այս եւս, եթէ ի պատճառս տառապանաց անցեալ ժամանակացն գտանին յեկեղեցական ոնտեսութեան ազգաց ձերոց ինչ ինչ տակաւին անտրոշ, վասն որոյ Աւաքելական իշխանութեամբ մերով սրտի մտօք կամեցաք նպաստ լինել ըստ Սրբա-

զան կանոնաց, և ըստ կարգաց Սրբոց Հարց բարեբոք յարդարել զամենայն և 'ի կարգի դնել, բայց ըստ ամենայնի կամիմք անփոփոխ պահել զեպիսկոպական ուղղափառ ծիսարանս եկեղեցական պաշտամանց ձերոց, զորս մեք իրաւամբ պատուեմք, թէպէտ և ի ցեղն զանազանեալք յիրս ինչ 'ի ծիսարանից լատինացւոց։ Քանզի և Նախորդք մեր զնոյն ծիսարանս եկեղեցական պաշտամանց ձերոց վասն կարի լաւն հնութեանց իւրեանց մեծարեալ 'ի պատուի ունէին. և գրեալ իսկ են 'ի լեզուս՝ որով նոքին իսկ Առաքեալք և առաջին հարք վարէին. և որ'ի նոսա կարգաւորութիւնք և պաշտամունք են, մեծապայծառ շքով, և փառաւորութեամբ կատարին, և այնու բարեպաշտ հաւատացեալքն առուել ևս փութան 'ի մեծարել զԱստուածեղէն խորհուրդս։ Զ մեծարանաց՝ զոր ունի Առաքելական Աթոռն առ Ուղղափառ գիրս պաշտամանց Արեւելեան եկեղեցեաց, վկայեն բազում վկայութք, և սահմանադրութիւնք Քահանայապետացն Հռովմայ առ ի պահել զնոսա անաղարտ և անփոփոխ։

Զատ լեցի ասէն միայն յիշել զԱռաքելական Թուղթս Նախնոյն մերոյ Ռենեդիկտոսի ջորեքտասաներորդի, մանաւանդ զայն Թուղթ որ սկսանի "Պատմեցան" գրեալ 'ի 26 Յուլիսի, 1755 (1) վասն այնորիկ 'ի գալ արեւելեան քահանայից յարեւմուտս ոչ միայն համարձակութիւն է նոցա աղդային բուն արարողութեամբ իւրեանց կատարել զպաշտամունս յեկեղեցիս լատինացւոց, այլ և գրատանին յայլ և յայլ տեղիս մանաւանդ 'ի Հռովմ քաղաքի եկեղեցիք չինեալք առանձին 'ի պէտս նոցա։ Այն և անդ վանորայք ընդարեւելեան արարողութեամբ և հիւրանոցք վասն նոցա։ Կանգնեալ են ևս դպրոցք ուր որդիք արեւելեան աղգաց առանձինն կամ ընդ այլս յաւանունս և 'ի սրբազան գիտութիւնս վարժեալ, և եկեղեցական կարգօք հրահանգեալ, ապա յիւրաքանչիւր աղգս գընացեալ զպաշտամունս եկեղեցւոյ կատարել մարթասցին։ Այլ թէպէտ ոմանք յայսց տեղեաց վասն տառապանաց յետին ժամանակաց բարձան 'ի միջայ, բայց են ևս դպրոցք որք մինչեւ ցայժմ ծաղկեալ

(1) Դ. Հատոր կոնտակաց Բենեդիկտոսի Ժդ. Թիւ 47։ Են և այլ եւս սահմանադրութիւնք նոյն Քահանայապետին վասն այսր իրաց յա. հատոր նոյն մատենի կոնդակաց Թիւ 87. եւ յդ. հատոր Թիւ 46։

պայծառանան, որով հաւատեաւ տեսանէք Յարդոյ Նշխարք, և սիրելի Որդեակք, եթէ որպիսի մարդասիրութեամբ խնամ ունի Աստուածային Դահն վասն ձեր, և վասն ձերոց պիտոյից։ Այս ևս յայտնի է ձեզ Յարդոյ Նշխարք և սիրելի Որդեակք, եթէ վասն խնամ տանելոյ հոգեւոր պիտոյից ձերոց օգնէ մեզ և ձեռնտու լինի ժողով բաղում Կարդինալաց Հռովմէական սուրբ եկեղեցւոյ, որ անուանի ժողով վասն տարածութեան հաւատոյ։ Նաեւ այլ եւս արք բաղումք եթէ Հռովմայեցիք, և եթէ եկք բնակեալք ի մեծի քաղաքի սոյն խնամ տանին և ջանան բարիս առնել և օգնել ձեզ։

Սմին իրի ոմանք ի լատինացւոց, և ի ձերոց ևս արեւելեան Եպիսկոպոսաց, և այլ ևս արք երկիւղածք և աստուածապաշտք զարդիս խորհուրդ արարին հաստատել բարեպաշտ իմն ընկերութիւն որոյ գործ և պաշտօն այս ինչ է. ընդ հովանեաւ վերոյիշեալ ժողովոյ մերոյ հանապազօրեայ սրբանուէր աղօթիւք հանդանակելոյ դրամս ինչ և այլովք ևս նպաստիւք ձեռնտու լինել ի պայծառութիւն Ուղղափառ հաւատոց և ի զարգացումն նորին ի միջի ձերում։ Այս ի ծանուցանել նոցա մեզ զայս բարեպաշտական խորհուրդ մտաց իւրեանց՝ գովեալ զայն հաստատեցաք, և յորդորեցաք զնոսա վաղվաղակի ձեռն ի գործ արկանել։

Դարձուցանեմք արդ զբանս մեր առանձինն առ ձեզ Յարդոյ Նշխարք, ուղղափառ Առաջնորդք ասեմ արեւելեան եկեղեցեաց, և գովեալ վերստին զձեր և զձերոց եկեղեցականաց զբարուք նպատակն ի կատարել զաստուածային պաշտամունս եկեղեցւոյ, որոյ վին թղթով ևս քան զևս յորդորեմք և քաջալերեմք զձեզ արիանալ յառաքինութիւնս։ Այս արդ ազաչեմք զձեզ ի Տէր Աստուածն մեր՝ ապաւինեալ լեռնանուագ օգնականութիւն նորա մեծաւ ըրջմրտութեամբ ի պահպանութիւն սիրելի խաչանցդ հսկեցէք և մի դադարեսջիք լուսաւորել զնոսա բանիւ և օրինակաւ առ ի գնալ նոցա ի հաճոյս Աստուծոյ յամենայնի և յամենայն գործս բարիս արդասաւորեալք։ Այս պատուէր տայիք Նրիցանց որք ընդ ձերով իշխանութեամբ են, կանխել ի նոյն զուարթ մտաւք, մանաւանդ որք զհոգ հոգւոց յանձն առեալ իցեն, սիրել զվայելչութիւն տան Աստուծոյ, արծարծել զեռանդն բարեպաշտութեան ժողովրդեանն պաշտել սրբութեամբ զսուրբ խորհուրդս, մի անփոյթ առ

նել զարմանք և գործոնք պաշտամանց իւրեանց, այլ յառաջին իմն փութով խնամ տանել 'ի հրահանգել զմանկունս յառաջին ընկերունս Քրիստոնէական վարդապետութեանց և զամենայն հաւատացեալ ժողովուրդս յարօտս Աստուածեղէն բանից արածել ըստ կարի նոցա դիւրին և հեշտընկալ գործելով զբանսն. բայց և նոցա և ձեզ պարտ և պատշաճ է բազում փութով և հոգաբարութեամբ խնամ տանել զի ամենայն հաւատացեալք փութացին պահել զմիաբանութիւն Հոգւոյն յօդիւն խաղաղութեան գոհացողք լեալ զԱստուածոյն։ Ուստ և զՀօրէն գթութեանց զի յայնչափ վտանգաց միջի շնորհօք նորա հաստատուն մնացին 'ի Կաթուղիկէ միաբանութեան միոյ եկեղեցւոյն Քրիստոսի, և կամ դարձեալ 'ի նոյն եկեալ մտին ուր այլք 'ի ժողովրդենէ նոցա դեռ արտաքոյ այնր միոյ Դաւթին Քրիստոսի մոլորեալ թափառին, յորմէ Հարք նոցա դժբաղդութեամբ բաժանեալ արտաքս ելին։ Արդ՝ անմարթ է մեզ չխօսիլ զբանս սիրոյ և խաղաղութեան և առ այն արեւելեան հաւատացեալս Քրիստոսի՝ որք 'ի հաղորդութենէ այսր սրբոյ Աթոռոյ Պետրոսի հեռացեալ են։ Բանդն սէրն Քրիստոսի ըստիպէ զմեզ ըստ խրատու և օրինակի նորա 'ի խնդիր ելանել օգեացն մոլորելոց ընդ անկոխ և ընդ խիստ ճանապարհ, և փութալ հասանել յօգնութիւն տկարութեան նոցա առ 'ի ժողովել 'ի փաքրախ Տէրունական հօտին։

Արդ լուարուք զբանս մեր դուք ամենեքեան որք յարեւելս և 'ի սահմանակից աշխարհս յանուն Քրիստոսի պարծիք, բայց ոչ ունիք հաղորդակցութիւն ընդ Հռովմէական սուրբ եկեղեցւոյ, և առանձինն դուք՝ որք 'ի մէջ սոցա Աստուածային պաշտամանց ըստ պատուոր կարգեալ էք, կամ 'ի գերագոյն պատիւս Եկեղեցւոյ ամբարձեալ այլոցն ամենեցուն Առաջնորդք գտանիք։ Յուշ լիցին ձեզ նախնի հանգամանք եկեղեցեաց ձերոց յորժամ ընդ միմեանս և ընդ այլ եկեղեցիս ուղղափառ աշխարհաց միոյ յօդիւ կապեալ էին. և զայն ևս ածջիք զմտաւ եթէ 'ի բաժանմանէդ որ եղեւ յետոյ շահեցայք և ոչ մի ինչ, որով և ոչ միայն ընդ արեւմտեան եկեղեցւոյ, այլ և ոչ ընդ միմեանս կարող եղէք պահել զառաջին միութիւն վարդապետութեան և Աստուածային առաջնորդութեան։

Յուշ լիցին ձեզ բանք հանգանակին հաւատոց՝ յորում ընդ մեզ հաւատայք և դուք " 'ի մի միայն սուրբ Կաթուղիկէ և Առա-

քելական Եկեղեցի » և ասէն նկատեսջիք և եւս թէ յայնչափ բաժանմունս եկեղեցեաց ձերոց գտանիցի՞ արդեօք սոյն այս Կաթուղիկէ միութիւն սուրբ և Առաքելական Եկեղեցւոյ ։ 'ի մերժելն ձեր՝ թէ միութիւնն այն չէ 'ի հաղորդակցութեան Հռովմէական եկեղեցւոյ , ընդ որով բաղում այլ եկեղեցիք՝ որք 'ի սիրուս տիեզերաց գտանին , միշտ 'ի մի մարմին զօդեցան և զօդին ։ Յայտ լիցի ձեզ եթէ զմիութիւնն՝ որով պայծառանայ Կաթուղիկէ եկեղեցին. յայտ առնէ այն բան Յովհաննու Աւետարանչի (1) որով Քրիստոս միածին Որդին Աստուծոյ վասն աշակերտաց իւրոց աղաչէր զՀայր իւր զայս օրինակ . « Հայր . սուրբ պահեա զնոսա յանուն քո , որով „ եղուրն ինձ . զի եղիցին մի , որպէս և մեք մի եմք ։ Եւ ապա „ յաւելու և ասէ ։ Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ , այլ և վասն „ զայն ամենայն հաւատացելոց քանիւն նոցա յիս . զի ամենեքին մի „ եղիցին , որպէս դու հայր յիս՝ և ես 'ի քեզ . զի և նոքա 'ի մեզ ի „ ցեն ։ Զի և աշխարհ հաւատասցէ , եթէ դու առաքեցեր զիս ։ „ Եւ ես զփառսն զոր ետուր ինձ՝ ետուս նոցա զի իցեն մի՝ որպէս „ և մեք մի եմք , ես 'ի նոսա , և դու յիս . զի եղիցին կատարեալք „ 'ի մի ։ Եւ գիտասցէ աշխարհ եթէ դու առաքեցեր զիս . և սիրեցի զնոսա որպէս դու զիս սիրեցեր » ։

Նա ինքն կենարարն մեր Քրիստոս այսր միոյ միայնոյ եկեղեցւոյ իւրոյ զհիմն , զոր դրուն դժոխոց մի յաղթահարեսցեն , եդ 'ի վերայ Պետրոսի Գլխոյն Առաքելոյ , որուն ետ զիրական արքայութեան (2) և վասն նորա աղաչեաց , զի մի պակասեսցին հաւատք նորա , հրաման ևս տուեալ նմա հաստատել զեղբարս իւր , (3) և միանգամայն՝ յանձն արար նմա՝ արածել զգառինս և զոչխարս իւր (4). ուստի և զբովանդակ իսկ զեկեղեցի իւր՝ որ առակ օրինակի էր ճշմարիտ գառանց և ոչխարացն Քրիստոսի ։ Եւ այս ամենայն հայի 'ի Բահանայապետս Հռովմայ 'ի յաջորդս Պետրոսի . քանզի զինի մահուան նորին իսկ Պետրոսի հիմունք եկեղեցւոյ՝ որ մինչեւ ցկատարած աշխարհի ունի տեւել , մի ասասանեսցին , յորոյ վերայ կանգնեաց զայն Քրիստոս ։ Ամեն իսկ եպիսկոպսան Լուսաւորչոյ սուրբն Երանոս աշակերտ սրբոյն Պողիկարպոսի աշակերտ .

(1) Յովհ . ԺԷ . 11 . 20 . 23 ։ (2) Մատթ . ԺԶ . 18 . 19 .
(3) Ղուկ . Իբ . 32 ։ (4) Յովհ . Իա . 15 ։

տին Յովհաննու Առաքելոյն՝ զոր արեւելեայք և արեւմտեայք յառաջին դարս Քրիստոնէութեան 'ի կարգս մեծամեծ արանց դասեն իբրեւ կամէր զվարդապետութիւնն աւանդեալ յԱռաքելոց անտի ընդդէմ հերետիկոսաց իւրոյ ժամանակին յանդիման առնել, աւելորդ վարկաւ զյաջորդութիւնս ամենայն եկեղեցեաց հաստատելոց յԱռաքելոյն Քրիստոսի մի ըստ միոջէ 'ի թիւ արկանել, այլ հաստատեաց, եթէ բաւական հեմարի ընդդէմ նոցա միայն զվարդապետութիւն Հռովմէական եկեղեցւոյն յառաջ բերել, քանզի ասէր (1). ընդ սմա վասն իւրոյ Գահերեց Գլխաւորութեան ամենայն եկեղեցեաց, այս է համօրէն հաւատացելոց՝ որ ընդ ամենայն աշխարհ, հարկ 'ի վերայ կոյ միաբանել, քանզի ամենայն աւանդութիւնք Առաքելոց պահեցան յամենայն հաւատացելոց՝ որք ընդ ամենայն աշխարհ 'ի նմին եկեղեցւոջ են։

Գիտեմք եթէ ամենեցուն ձեր փոյթ և ջանք այն է, հաստատուն կալ 'ի վարդապետութիւնս Նախնեաց ձերոց, զհետ երթալ Նախնի Առաջնորդաց և համօրէն հաւատացելոց արեւելեան կողմանց, զորոց վկայեն անթիւ յիշատակարանք, եթէ նոքա միաբանք և համամիտք էին ընդ արեւմտեայս 'ի պատուել զիշխանութիւն Քահանայապետաց Հռովմայ։ Արդ բաց 'ի վկայութենէ Եղբանոսի՝ զոր 'ի վեր անդր յիշատակեցաք, աստէն 'ի մէջ բազում վկայութեանց արեւելեայց 'ի հաստատութիւն ճշմարտութեանս, ոչ ինչ դանդաղիմք յառաջ բերել զպատահեալսն 'ի ԺԲրորդ դարու Եկեղեցւոյ 'ի դատաստանի անդ Ամանասայ Աղէքսանդրիոյ Հայրապետի առն երեւելւոյ 'ի սրբութեան, 'ի վարդապետութեան, 'ի հոլովական բարի նախանձու։ Սա յարեւելեան Եպիսկոպոսաց ոմանց, մանաւանդ 'ի ժողովն Տիւրոսի անիրաւութեամբ դատապարտեալ և յեկեղեցւոյ իւրմէ արտաքսեալ եկն 'ի Հռովմ, ուր ընդ նմա եկին յարեւելից այլ եւս Եպիսկոպոսունք հալածեալք յանիրաւի Ամթոռոց իւրեանց. "Եւ Եպիսկոպոսն Հռոմայ (որ էր նախորդ մեր „Յուլիոս) ծանուցեալ իւրաքանչիւրոց նոցա զդատաստան, և տեսեալ զամենեսին հաստատուն 'ի վարդապետութիւնս Նիկիական „հաւատոյ, և միաբան 'ի կարծիս իւր, ընկալաւ զնոսա 'ի հաղորդութիւն իւր։ Եւ քանզի վասն դերագահութեան Ամթոռոյ իւ-

(1) Երանոս. ընդդ. հերետ. գիրք. գ. գլ. գ։

„ըստ հոգ ամենայն եկեղեցեաց նմա գոլով պատկանեալ՝ դարձեալ
„անդրէն զնոսա յԱթոռս իւրեանց։ Դրեաց և Թուղթս առ արե-
„ւելեան Եպիսկոպոսունս, կշտամբեալ զնոսա, զի 'ի դատաստանի
„անդ Եպիսկոպոսաց այնոցիկ ոչ ուղղութեամբ դատ արարին, և
„զվնաս եկեղեցւոյն խուսվեցին „ (1)։ Նոյնպէս և 'ի սկզբան հին-
գերորդ դարու Յովհան Ոսկեբերան Հայրապետ Կոստանդնուպոլ-
սոյ այր մեծանուն և երեւելի 'ի Քաղկեդոն 'ի ժողովի՝ որ առ
Կաշնեաւ կոչի, դատապարտեալ, իբրեւ Թուղթս և հրեշտակս
առ այս Առաքելական Աթոռ առաքեաց, յայնժամ Նախորդն մեր
սուրբն Ինոկենտիոս առաջին յայտնեաց ամենեցուն զանմեղու-
թիւն նորա։ (2)

Սիւս ևս հաստատութիւն մեծարելոյ Նախնեաց ձերոց զհա-
խանութիւն Քահանայապետաց Հռովմայ գտանի 'ի ժողովին Քաղ-
կեդոնի՝ յորում ժողովեցան յամին 451, Եպիսկոպոսունք Թուով
իբր վեց հարիւր՝ յորոց բազումք, բաց 'ի սակաւուց ոմանց, յարե-
ւելից էին. յընթեռնուլ անդ զԹուղթն Լեւոնի մեծի Քահանա-
յապետին Հռովմայ յերկրորդ գումարման անդ ժողովոյն, ամե-
նայն Հայրք միաբան աղաղակեցին "Պետրոս բերանով Լեւոնի այս-
պէս խօսեցաւ „։ Յետոյ իբրեւ գահերեցութեամբ Հրեշտակաց
Քահանայապետին վախճան եղեւ ժողովոյն, նոքին Հարք 'ի յայ-
տարարութեան անդ առ Լեւոն ասեն, եթէ նա ինքն 'ի ձեռն
Հրեշտակաց իւրոց 'ի ժողովի անդ "Իբրեւ Պլուխ անդամոց գահ-
երեց եղեւ „։ (3)

Բրդ ոչ միայն 'ի յիշատակարանաց անտի ժողովոյն Քաղկեդո-
նի այլ և 'ի պատմութենէ այլոց Նախնի Սիւնհադոսաց արեւելից
մարթ էր բազում այլ յիշատակս և վկայութիւնս յառաջ բերել՝

(1) Ա յս բանք են Սոզոմենոսի. պատմ. եկեղ. գիրք. դ. գլ. ը։ Զայսմանէ երկայն բանիւք գրէ ինքն Աթանաս հայրապետ 'ի պատասխանատուութեան իւրում ընդդէմ Արիանոսաց։

(2) Զայսմանէ գրեաց Ոսկեբ. կրկին Թուղթս առ Ինոկենտիոս որք թղթոյքն հանդերձ՝ զոր սոյն Քահանայապետն գրեաց առ Ոսկեբերան. առ եկեղեցականս. առ ժողովուրդն Կոստանդնուպոլսոյ գտանին յգ. հատոր մատենից Ոսկեբերանի, տպագրեալ 'ի Մաուրինեանց. երես. 515. և այլն։

(3) գործ ժողովոյ տպագրութիւն Լարբեոսի 'ի Վենետիկ. հատ. դ. երես. 1255 և 1755։

յորոց յայտնի երևի, եթէ Քահանայապետք Հռովմայ 'ի Սիւնոդոս՝ մանաւանդ 'ի Տիեզերականս զառաջին տեղի ունէին, և թէ հաւանութիւն և հաստատութիւն յառաջ և զկնի ժողովոցն՝ զնոցանէ կախեալ կային։ Նաեւ բաց 'ի ժողովոց հնար էր մեզ բազում և այլ վկայութիւնս 'ի սրբոց Հարց, և 'ի Նախնի արեւելեան Մատենագրաց յառաջ քերեալ, յորս մարթ է տեսանել թէ Նախնիք ձեր որչափ յարգէին միշտ զիշխանութիւն Քահանայապետացն Հռովմայ ընդ ամենայն արեւելս։ Այլ վասն կարի իմն երկարութեան, և զոր յառաջ բերաք բաւական են 'ի ճշմարտութիւն բանից մերոց։ Յաղագս որոյ իբրեւ կնիք և հաստատութիւն ամենայնի յիշեսցուք աստէն՝ զոր ինչ 'ի հնումն գործեցին հաւատացեալքն 'ի Կորնթոս, այս է 'ի ժամանակս Առաքելոց, 'ի հակառակութիւնս, որովք եկեղեցի նոցա մեծապէս խռովէր։ Քանզի Կորնթացիք զանցս խռովութեանցն այնոցիկ 'ի գիր անցուցեալ 'ի ձեռն Փորտունատեայ առաքեցին զթուղթ իւրեանց առ սուրբն Կղեմէս որ սակաւ ամօք զկնի մահուան սրբոյն Պետրոսի եկաց յԱթոռ Քահանայապետութեան եկեղեցւոյն Հռովմայ, որոյ ընկալեալ զայն թուղթ և զգուշութեամբ քննել զիրսն, գրեաց նոցա պատասխանի և առաքեաց 'ի ձեռն նոյն Փորտունատեայ, ընդ որում յղեաց և զհրեշտակս իւր զՎղոդիոս Եփեբոս, և զՎաղերիոս Վիտոն, որք բերին 'ի Կորնթոս զհռչակաւոր թուղթն զայն սրբոյ Քահանայապետին Հռովմայ (1), որ և եթէ առ Կորնթացիս, և եթէ առ այլ արեւելեայս այնպէս մեծարոյ եղեւ մինչեւ 'ի յետին ժամանակս 'ի բազում եկեղեցիս ընթեռնուլ հրապարակաւ։ (2)

Արդ վասն այդր ամենայնի յորդորեմք զձեզ, և աղաչեմք անյապաղ և վաղվաղակի գալ 'ի մի միաբանութիւն այսր սրբոյ Աթոռոյ Պետրոսի՝ յորոյ վերայ ետ Քրիստոս զհիմն ճշմարիտ եկեղեցւոյն իւրոյ, որպէս ցուցանեն աւանդութիւնք Նախնեաց ձերոց և այլ ևս առաջին սրբոց Հարց, և բանք Քրիստոսի Տեառն մերոյ զորս 'ի վերանդրյիշատակեցաք։ Եւ չէ իսկ մարթ կալ 'ի հաղորդակցութեան մի-

(1) Այս թուղթ սրբոյն Կղեմայ գտանի 'ի մատենադարանի Նախնի հարց, զոր տպագրեաց Կալանտիոս 'ի Վենետիկ. հատ. ա. եր. 9 և այլն։

(2) Եւսեբիոս 'ի պատմ. եկեղ. գիրք. դ. գլ. 16. եւ Դիոնեսիոս եպիսկոպոս կորնթացւոց. զորոյ զվկայութիւն 'ի մէջ բերէ նոյն Եւսեբ. գիրք. դ. գլ. 23։

ոյ սուրբ Կաթուղիկէ և Առաքելական եկեղեցւոյ որոց միանգամ կամիցին բաժանել 'ի հաստատութենէ Վ. իմին՝ յորոյ վերայ Աստուած չինեաց զեկեղեցի իւր։ Եւ չիք ինչ պատճառք դանդաղելոյ ձեր գալ 'ի մի միաբանութիւն ճշմարիտ եկեղեցւոյ, և 'ի հաղորդակցութիւն սրբոյ Աթոռոյս։ Քանզի գիտէք իսկ եթէ 'ի սէր խոստովանութեան ճշմարիտ հաւատոյ և վարձուց յաւիտենական կենաց չիք ինչ բնաւ խիստ և դժուարին, որում չիցէ մեզ մարթ համբերել վասն փառացն Քրիստոսի։ Այլ մեք ըստ կարի վկայեմք և հաստատեմք եթէ 'ի վաղուց հետէ եդեալ եմք 'ի մտի 'ի դառնալ ձեր 'ի հաղորդակցութիւն մեր ոչ միայն չդնել 'ի վերայ ձեր բեռն ինչ դժուարակիր այլ և ըստ ընդաբոյս մարդասէր բնաւորութեան այր սրբոյ Աթոռոյ բաղում սիրով և հայրական քաղցրութեամբ գիրկս արկանել ձեզ։ Ուստի և սահմանեմք մի ինչ աւելի բեռն դնել 'ի վերայ ձեր, բայց միայն 'ի կարեւորացս այսոցիկ այս է՝ 'ի դառնալ ձեր 'ի մի միաբանութիւն, և ընդ մեզ համամիտք, և միաբանք 'ի խոստովանութեան ճշմարիտ հաւատոց ըստ Կաթուղիկէ Եկեղեցւոյ, ունել զհաղորդութիւն ընդ Եկեղեցւոյն, և ընդ այս Գերագոյն Աթոռոյ Պետրոսի։ Սմին իրի յարարողութեանց անտի ձերոց զայնոսիկ միայն պարտ է 'ի բաց թողուլ, որք 'թերեւս հակառակ Ուղղափառ հաւատոյ, և միութեան Կաթուղիկէ Եկեղեցւոյ 'ի ժամանակի բաժանման անդ սպրդեալ մտին։ Բաց 'ի սոցանէ նախնի արեւելեան ծիսարանք ձեր հաստատուն և անփոփոխ պահեցին, զորս ըստ Նախնեաց մերոց և մեք նոյնպէս մեծարեմք վասն պատուական հնութեան նոցա, և վասն արծարծելոյ և եւս զգեռանդն Աստուածապաշտութեան որպէս 'ի վեր անդր ասացաք։

Եւ եւս հաստատեալ եմք 'ի մտի զնոյն սէր ցուցանել պաշտօնէից եկեղեցւոյ, Քահանայից, և Առաջնորդաց ազգացն այնոցիկ եկելոց 'ի մի միաբանութիւն Կաթուղիկէ Եկեղեցւոյ, 'զոր օրինակ Նախնիք մեր յառաջին և 'ի վերջին ժամանակս յայտնի ցուցին, այսինքն զամենեսին զնոսա յառաջին իշխանութեան և 'ի պատուի իւրեանց ունելով, ըստ ամենայնի նոքաւք հովուեսցուք զժողովուրդս իւրեանց 'ի պահպանութիւն և 'ի պայծառութիւն Կաթուղիկէ Եկեղեցւոյ, որպէս զարդիս յարեւելս ընդ Ուղղափառ եկեղեցիս վարիմք։

Արդ թէ զուիտի մանկունս՝ և թէ զաշխարհականս եկեալս

'ի մեր հաղորդակցութիւն իբրեւ զայլ արեւելեան Ուղղափառ ժողովուրդս մարդասիրութեամբ ընդդրկեսցուք. նա մանաւանդ ցանկալի է մեզ՝ սոցա և նոցա միօրինակ հանապազ բաղում բարիս առնել։

Արդ նա ինքն բարձրեալն Աստուած՝ որոյ գթութիւնն է անբաւ, տացէ զօրութիւն բանից մերոց. և օրհնեսցէ զՔանս և զվաստակս Եղբարց և Որդւոց մերոց, որք մեօք հանդերձ ինամ տարեալ հոգան 'ի փրկութիւն հոգւոց ձերոց, և զմերս նուաստութիւն մխիթարութեամբ ուրախ արասցէ 'ի ցուցանել մեզ զնորոգումն Կաթուղիկէ միութեան յարեւելեան ազգս Քրիստոնէից, որով կարող լիցուք առ 'ի առաւել ևս տարածանել զՀշմարիտ հաւատս Քրիստոսի նաեւ՝ յազգս անծանօթս 'ի նմանէ։ Եւ մեք ոչ դադարեմք զսոյն զայս 'ի Հօրէն Լուսոյ, և յԱստուծոյն ողորմութեանց 'ի ձեռն Որդւոյ իւրոյ միածնի և Փրկչին մերոյ ամենայն աղօթիւք, և խնդրուածովք հայցել։ Եւ դմին իրի խնդրեմք զպաշտպանութիւն սրբոյ Կուսին Մարիամայ և սրբոց Առաքելոց, Մարտիրոսաց, և սրբոց Հարց՝ որոց քարոզութեամբ, արեամբ, առաքինութեամբք, և մատենագրութեամբք Ճշմարիտ հաւատք Քրիստոսի սփռեցան յառաջագոյն իսկ յարեւելս և պահպանեցան։

Եւ ցանկանալով ցանկամբ յուրախութիւն սրտից մերոց տեսանել զձեզ 'ի մի միաբանութեան Կաթուղիկէ Եկեղեցւոյ, և օրհնել զձեզ իբրեւ զՀշմարիտ զԵղբարս և Որդիս մեր։ Եւ այժմ ամենայն համօրէն Ուղղափառ Հայրապետաց Նախագահ Եպիսկոպոսաց, Ընդեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց Եկեղեցականաց և Աշխարհականաց որք յարեւելս և 'ի սահմանակից տեղիս իցեն, զխանդակաթ սէր մեր յայտ արարեալ սիրալիր գթովք շնորհեմք ամենեցուն զԱռաքելական Օրհնութիւն մեր։

Տուեալ 'ի Հռոմն 'ի Մարիամ Մայրն։

Ի վերջերը աւուր յունվար ամսոյն 1848։ Յերիորդ ամի Բռնակալապետութեան մերոյ։

ՊԻՈՍ ԳԷՊ Թ.

ԱՄՍԵՆԻՊԱՐԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՏԵՍՈՒՄՆ
1931
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ